

Սիրեաց նա զամենայն խօսս կործանման եւ զլեզուս նենգաւորս . որ դնէր զբերանս իւր յերկինս եւ զլեզուս իւր ածէր զերկրաւ : Պարծէր զանօրէնութիւն իւր տղայոց իւր ի մէջ բարեկենդանութեան իւրոյ . դնէր զնշանս իւր ի նշանս եւ ինքն ոչ իմանայր զելս ի վերուստ եւ ասէր թէ Ոչ տեսանէ զայս Տէր եւ ոչ ի միտ առնու Աստուած Յակորայ : Վասն որոյ ի դատաստանէ իւրմէ եղեւ դատապարտեալ եւ ի քաղաքի Տեառն պատկեր նորա անարգեցաւ եւ յամբարտաւանութեան իւրոյ կործանեցաւ , կորեաւ , պակասեցաւ , տարագրեցաւ , յանկարծակի սատակեցաւ եւ եղեւ որպէս երազ զարթուցելոց : Եւ հաստատուն են տանջանք նորա , զի ի վաստակս մարդկան չէր եւ ըստ մարդկան ոչ տանջի : Եւ այսքանիւք բանիւք առաւել եւս ի Կիրս Սուրբս գտանին համաձայն վկայութիւնք վասն ստուծեան , նենգութեան , խորամանկութեան առն , որովք մարթասցիս զեւսն ուսանիլ իմաստասիրութեամբ : Իսկ եթէ կամիցիս ըստ վկայութեանս բան բանի՝ ընթերցցիս զհատոր հատոր պատմութիւնս գործոց նորա եւ տեսցես՝ թէ ո՛րպէս յարմարագունիւք առաւելուն ի վերայ վկայութեանցս բանք ի Սուրբ Գրոց : Եւ զի ամենայնիւ ընկալաւ զմխիթարութիւն աստի կեանս բախտին յաջողութեամբ ըստ ժամանակին՝ միայն զիւրն ցանկալ , խնդրել եւ ապուել զփառ եւ զպատառ , եւ այլոց մախալ եւ զչարիլ եւ լեզուագարիլ առ գրունս աշխարհակալաց : Որոյ կեօռի վերայ քարին հարկեցաւ յինէն գրել զանուն եւ զթուական յիշատակութեամբ . պատասխանեցի թէ Ձեռն իմ ոչ ընթանայ առ ի գրել վասն յիշատակի նորա բան ինչ , քան թէ զբան Մարգարէին թէ Այս այն այր է որ ոչ արար զԱստուած իւր օգնական , այլ յուսացաւ ի մեծութիւն իւր եւ զօրացաւ ի նանրութեան իւրում : Վասն որոյ խնդրողք յետս չոգան : Եւ դու լե՛ր բարե-